

«Ցեպելին Արմենիան» նոր լուծումներ է առաջարկում

Վերջին տարիներին միջազգային շուկայում մետաղների գները մշտապես տատանվում են, առավել շատ դեպքերում դրանք նվազման միտումներ են ունենում, ինչը ստիպում է հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպություններին արտադրանքի ծավալների ավելացմանը զուգընթաց անընդհատ մտածել աշխատանքի արտադրողականության բարելավման, շահագործվող մեքենամեխանիզմների արդյունավետությունն առավելագույնի հասցնելու, կորուստները բացառելու կամ նվազագույնի հասցնելու մասին:

Գաղտնիք չէ, որ մեքենամեխանիզմների ոչ արդյունավետ շահագործման արդյունքում հանքանյութերի, դատարկ ապարների և հանքաքարերի տեղափոխման գործընթացներում մշտապես առկա են կորուստները:

Լինելով Հայաստանում աշխար-



հահռչակ CATERPILLAR ընկերության բացառիկ ներկայացուցիչը, և մտահոգ լինելով իր գործընկերների հաջողություններով, «Ցեպելին Արմենիա» ընկերությունը հանքարդյունա-

բերական ոլորտում ներգրավված ձեռնարկություններին առաջարկում է գործունեության մեջ ներդնել CATERPILLAR ընկերության Minestar համակարգը:



Ինչ է իրենից ներկայացնում MINESTAR համակարգը.

Այն թույլ է տալիս ժամանակի տվյալ պահին ճշգրիտ գնահատել մեքենայի-մեխանիզմի տեխնիկական վիճակը, ինչպես նաև արտադրական ցիկլի արդյունավետությունը: Համակարգը բաղկացած է հինգ ենթահամակարգերից՝ fleet, health, terrain, detect և command:

Ներկայացնենք դրանք առանձին-առանձին



FLEET

“Fleet” ենթահամակարգը թույլ է տալիս ժամանակի տվյալ պահին որոշել մեքենայի աշխարհագրական դիրքը, կառավարել մեքենան արտադրական ցիկլում, ստանալ ամբողջական պատկեր հանքում աշխատող տրանսպորտային միջոցների արտադրողականության և արդյունավետության վերաբերյալ:



HEALTH

“Health” ենթահամակարգը հնարավորություն է տալիս ժամանակի տվյալ պահին ստանալ արտադրական ցիկլում առկա բոլոր տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի մասին տեղեկատվություն: Այն կատարում է շարժակազմի անընդհատ մոնիտորինգ, դիագնոստիկա, վերլուծություն, ունի հաշվետվությունների լայն հնարավորություններ:



TERRAIN

“Terrain” ենթահամակարգը հնարավորություն է տալիս բարձր ճշգրտությամբ կառավարել հորատման, էքսկավացիոն, բեռնման ինչպես նաև գրեյդինգի վերլուծություն, գործողությունների ավտոմատացմամբ այն հնարավորություն է տալիս բարձրացնել մեխանիզմի աշխատանքի էֆեկտիվությունը և ճշգրտությունը, ինչպես նաև շարունակական տեղեկատվություն է տրամադրում մեխանիզմի արդյունավետության վերաբերյալ:



DETECT

“Detect” ենթահամակարգը բարձրացնում է օպերատորների տեղեկացվածությունը մեքենայի շրջապատող միջավայրի մասին, տրամադրում է տեղեկատվություն մեխանիզմի օպերատորի տեսադաշտում առկա «կույր» կետերի վերաբերյալ և ճշգրտորեն հայտնաբերում է ինչպես շարժական, այնպես էլ անշարժ օբյեկտները և արգելքները:



COMMAND

“Command” ենթահամակարգը՝ համալրելով վերոնշյալ չորս համակարգերը, հնարավորություն է տալիս հեռակառավարել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ հանքում աշխատող ամբողջ շարժակազմը: Այս համակարգը կիրառելի է բուլդոզերների, հորատող և ինքնաթափ, ինչպես նաև ստորգետնյա աշխատանքների համար նախատեսված մեքենաների համար:



Հատկանշական է, որ համակարգի կիրառումը անփոփոխ շարժակազմի դեպքում բերում է մինչև 25% արտադրողականության աճի, ինչպես նաև մեքենաների և մեխանիզմների օպերացիոն ծախսերի նվազման:

Ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է մեքենայի տեխնիկական վիճակի մասին տվյալ պահին ճշգրիտ ինֆորմացիայի հասանելիությամբ, ինչը բացառում է վթարները և դրանց արդյունքում մեքենաների վերանորոգումը: Այսինքն, ճշգրիտ տեղեկություն ստանալով կարելի է խուսափել վթարներից:

Համակարգի կիրառումը անհամեմատ նվազեցնում է 1տոննա հանքաքարի տեղափոխման վրա կատարած ծախսերը:

Համակարգը կիրառվում է դիսպետչերական կետից, հիմնականում երկու դիսպետչերների օգնությամբ, որոնցից մեկը պատասխանատու է արտադրական ցիկլի արդյունավետության, իսկ մյուսը շարժակազմի տեխնիկական վիճակի և սպասարկման համար: Ընդ որում, դիսպետչերական կետը անընդհատ կապի մեջ է լինում դիլերի ներկայացուցչի հետ:

Համակարգը հաջողությամբ կիրառվում է աշխարհի առաջատար հանքարդյունահանման ընկերություններում, ինչպիսիք են, օրինակ, ավստրալական KCGM (Superpit) և կանադական Osisko հանքավայրերը:

Այն կարելի է կիրառել այն մեքենաների վրա, որոնք համարված են VIMS համակարգով: Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունում արդեն շահագործվում են 96տ և 136 տ բեռնատարողությամբ 35 մեծ ինքնաթափեր:

